**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

**գ. Լոռի Բերդ** **« 12 » ապրիլի 2024թ.**

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  ԹԻՎ 4

## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Կայացավ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագնու 2024թ. ապրիլի 12-ին ժամը՝ 12:00-ին հրավիրված հերթական նիստը:

Նիստի հեռարձակումը տեխնիկական խնդիրների պատճառով հեռարձակվում է համայնքապետարանի պաշտոնական ֆեյսբուքյան էջով:

Նիստին ներկա էին Լոռի Բերդ համայնքի ավագանու տասներեք անդամները, բացակա էին Թամարա Շահնազարյանը և Աննա Գրիգորյանը:

Նիստը վարեց՝ Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝ Արայիկ Ներսիսյանը:

Նիստը արձանագրեց՝ Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Անի Մարտիրոսյանը:

Համայնքի ղեկավար Ա. Ներսիսյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որտեղ տեղ էին գտել հետևյալ հարցերը.

Լսեցին՝

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Զեկ./Արայիկ Ներսիսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով և 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝

**համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2024 թվականի չորրորդ նստաշրջանի հերթական նիստի՝ ապրիլի 12-ի նիստի օրակարգը՝ համաձայն ստորև ներկայացված տեսքի.

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2024 թվականի չորրորդ նստաշրջանի հերթական նիստի՝ ապրիլի 12-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2024 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին Լոռի Բերդ համայնքի ղեկավարի հաղորդումը ի գիտություն ընդունելու մասին:
3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի դպրոցների շրջանավարտներին վերջին զանգի և Հայրենական մեծ պատերազմի մասնակցին մայիսի 9-ի օրվա կապակցությամբ գումար տրամադրելու մասին:
4) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի բնակիչներին սոցիալական օգնություն տրամադրելու մասին:
5) «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի կրթության, սպորտի և մշակույթի բնագավառում հաջողություններ գրանցած բնակիչներին դրամական մրցանակ տրամադրելու մասին» Լոռի Բերդ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 17-ի թիվ 11-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
6) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին:

**<u>13 կողմ</u>, <u>0 դեմ</u>, <u>0 ձեռնպահ:</u>**
Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 23-Ա/

**<u>Լսեցին՝</u>**

### ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**<u>Զեկ./Արայիկ Ներսիսյան/</u>**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով՝

**համայնքի ավագանին որոշում է.**

**<u>ավագանին որոշեց՝</u>** ընդունել ի գիտություն Լոռի Բերդ համայնքի 2024 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին Լոռի Բերդ համայնքի ղեկավարի հաղորդումը

Հավելվածը կցվում է:

**<u>13 կողմ</u>, <u>0 դեմ</u>, <u>0 ձեռնպահ:</u>**

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 24-Ն/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿՑԻՆ ՄԱՅԻՍԻ 9-Ի ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. /Անի Մարտիրոսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 42 կետերով, Լոռի Բերդ համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 27-ի 14-Ա որոշմամբ, ինչպես նաև հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ավագանին որոշեց՝ Լոռի Բերդ համայնքի 2024թ. բյուջեի «Սոցիալական հատուկ արտոնություններ» ծրագրի 10 բաժնի 07 խմբի 01 դասի 4729 հոդվածով նախատեսված գումարից համայնքի դպրոցների շրջանավարտներին յուրաքանչյուրին տրամադրել 10.000-ական ՀՀ դրամ:

Լոռի Բերդ համայնքի 2024թ. բյուջեից Սոցիալական հատուկ արտոնություններ» ծրագրի 10 բաժնի 07 խմբի 01 դասի 4729 հոդվածով նախատեսված գումարից Հայրենական մեծ պատերազմի մասնակից Սուրեն Շամիրի Պապիկյանին «Մայիսի 9»-ի օրվա կապակցությամբ՝ տրամադրել 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 25-Ա/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լսեցին՝

Զեկ. /Անահիտ Շահինյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Լոռի Բերդ համայնքի ավագանու 08.12.2023թ. թիվ 76-Ն որոշմամբ, ինչպես նաև հաշվի առնելով Լոռի Բերդ համայնքի Յաղդան բնակավայրի բնակիչ՝ Ռուստամ Պավլիկի Մամաջանյանի (անձնագիր՝ AT0670005, տրված՝ 16.02.2021թ. 053-ի կողմից) և Ագարակ բնակավայրի բնակիչ՝ Աննա Օրջոնի Գևորգյանի (անձնագիր՝ AV0510670, տրված՝ 08.11.2022թ. 053-ի կողմից) դիմումները՝

ավագանին որոշեց՝ Լոռի Բերդ համայնքի 2024թ. բյուջեի 10-07-01 դասակարգմամբ «Սոցիալական հատուկ արտոնություններ» ծրագրի 4729 հոդվածով նախատեսված

գումարից 40.000-ական (քառասուն հազար) ՀՀ դրամի չափով միանվագ սոցիալական օգնություն տրամադրել Ռուստամ Պավլիկի Մամաջանյանին և Աննա Օրջոնի Գևորգյանին:

13 **կողմ**, **0 դեմ**, **0 ձեռնպահ:**

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 26-Ա/

**Լսեցին՝**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՐԱՆՑԱԾ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 11-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Զեկ. / Անի Մարտիրոսյան /**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետով՝

**ավագանին որոշեց՝** «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի կրթության, սպորտի և մշակույթի բնագավառում հաջողություններ գրանցած բնակիչներին դրամական մրցանակ տրամադրելու մասին» Լոռի Բերդ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 17-ի թիվ 11-Ա որոշման 1-ին մասի 1.2. ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.
«1.2. Լոռի Բերդ համայնքի բնակիչներին՝ գիտության, սպորտի և մշակույթի բնագավառում հաջողություններ գրանցելու, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում երեք և ավելի տարիներ բարձր առաջադիմություն ցուցաբերելու համար - 40.000 (քառասուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով»

**13 կողմ**, **0 դեմ**, **0 ձեռնպահ:**

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 27-Ա/

**Լսեցին՝**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Զեկ. /Անի Մարտիրոսյան/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով՝

**ավագանին որոշեց՝** Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանել՝ 2024 թվականի մայիսի 10-ը, ժամը՝ 12:00-ն:

13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 28-Ա/

Համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Մարգարիտա Հովսեփյանը ներկայացրեց 2024թ. վճարված սոցիալական օգնությունների և դրամական մրցանակների մասին հաղորդում՝ 15.03.2024-12.04.2024թթ. ժամանակահատվածի դրությամբ և 2024թ. տարեսկզբից.

2024թ վճարված սոց վճարների և դրամական մրցանակների մասին հաղորդում

| Սոց. վճարի տեսակը | 15.03.2024- 12.04.2024 | | 2024թ.տարեսկզբից | |
|---|---|---|---|---|
| | Սոց. Վճար ստացած անձանց քանակը | Գումարը /հազ.դրամ/ | Սոց. Վճար ստացած անձանց քանակը | Գումարը /հազ.դրամ/ |
| Երեխայի ծննդյան կապակցությամբ | 7 | 240,0 | 20 | 700,0 |
| հուղարկավորության կազմակերպման համար | 8 | 320,0 | 22 | 880,0 |
| սոցիալական հատուկ արտոնություններ, այդ թվում | 10 | 220 | 46 | 1 120,0 |
| նորակոչիկ զինվորի երդման արարողությանը մասնակցելու համար | | | 6 | 240,0 |
| Հավաքների մասնակցության համար | 9 | 180,0 | 36 | 720,0 |
| Այլ | 1 | 40,0 | 4 | 160,0 |
| Ընդամենը սոց վճար | 25 | 780,0 | 88 | 2 700,0 |
| Այլ մշակութային կազմակերպություններ նախահաշվով վճարված դրամական մրցանակներ | | | 7 | 280,0 |

***Նիստի փակում***:

Ավագանու անդամներ՝

Ներսիսյան Արայիկ Մենձիկի

Վարդումյան Հայկ Վազգենի

Պապյան Հարություն Միշիկի

Պապիկյան Վահրամ Ռոմիկի

Ներսեսյան Իրինա Վազգենի

Չիբուխչյան Արման Հրաչիկի

Մարգարյան Սիլվա Ստեփանի

Սիմոնյան Անահիտ Բաբկենի

Վերմիշյան Կարլեն Ջիվանի

Չատինյան Վանո Վալերի

Սերոբյան Անի Սամվելի

Գևորգյան Միշիկ Մարտիկի

Ասրյան Աննա Տիգրանի

Լոռի Բերդ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝

Արայիկ Ներսիսյան ______________

*Նիստը արձանագրեց*՝ Անի Մարտիրոսյանը ______________

Կ.տ.